ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

2025թվական

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության մշտադիտարկման և զբոսաշրջության 2025թվականի առաջին եռամսյակի աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Դիլիջան» ազգային պարկում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանն ու պահպանմանը:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում անտառների ընդհանուր վիճակի ուսումնասիրություն

2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմվել է արտակարգ իրավիճակներում և հրդեհների ժամանակ «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի արտակարգ արձագանքման պլանը:

«Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի թիվ 10 և թիվ 5 պահաբաժիններում իրականացվել է քամատապալ, ձյունակոտոր սոճիների հաշվառում: Հաշվառվել է 49 ծառ՝ 27.9 խտխմ ծավալով, որից 9.33 խմ շինափայտ: Կազմվել են հաշվեգնահատման ցուցակները և հատատեղի անձնագիրը:

Իրականացվել է 2024 թվականի ընթացքում կազմված անտառահատման տոմսերով հաշվառված փայտանյութի մնացորդի հաշվարկ և տեղադիրքերի ճշգրտում՝ «Դիլիջան» ազգային պարկ»-ի 2025 թվականի գոտիավորման քարտեզների հետ համադրման նպատակով:

Իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներքին պահեստ փայտանյութի հանձնման-ընդունման, պահեստից փայտանյութի բացթողման և համապատասխան փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

Կատարվել են «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում բռնկված հրդեհների հրդեհաշիջման աշխատանքներ, հրդեհների զբաղեցրած տարածքների տեղազննման և չափագրման աշխատանքներ: 2025 թվականի հունվարի 20-ից մարտի 11-ն ընկած

ժամանակահատվածում «Դիլիջան» ազգային պարկ»-ին հարակից համայքների բնակչությանը տրամադրվել է անվճար թափուկ փայտանյութի օգտագործման 75 տոմս՝ 114.5 խմ ծավալով փայտանյութի համար:

Էկոպարեկային ծառայության աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են շրջայցեր ազգային պարկի բոլոր տեղամաս մասնաճյուղերում, կատարվել են տարածքների և տեղադիրքերի ճշգրտման աշխատանքներ: Մինչ 2025 թվականի մարտի 31-ը Էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից կազմվել է 34 անտառխախտման արձանագրություն, որից 7-ը հրդեհի վերաբերյալ՝ 24.9 հա և 27-ը ապօրինի ծառահատման վերաբերյալ՝ 184 ծառ 26 ճյուղ 181.236 խտխմ ծավալով:

Ազգային պարկի «Գոշ տեղամաս» մասնաճյուղում իրականացվել է այցեր, որի ընթացքում ստուգվել է հաշվառված փայտանյութի առկայությունը:

ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ

Կենսաբազմազանության տվյալների բազայում բույսերի տեսակային կազմի և դրանց աճելավայրերի գրանցման նպատակով 2025 թվականի առաջին եռամսյակում հավաքագրվել են նյութեր: Բազայում կենդանիների վերաբերյալ տվյալները գրանցվել են տեղամաս – մասնաճյուղում կենդանիների հետքերի վերաբերյալ աշխատակիցների կողմից հավաքագրված և տեղադրված ֆոտոթակարդների տվյալների համաձայն:

Բազայում առաջին եռամսյակի ընթացքում գրանցվել է 19 բուսատեսակ, 58 անուն կենդանի, որոնք պատկանում են հետևյալ ընտանիքների.

1. Երկկճղակավորների կարգ՝
- Եղջերուների ընտանիք՝ այծյամ
2. Գիշատիչների կարգ՝
- Արջերի ընտանիք՝ գորշ արջ
- Շնազգիների ընտանիք՝ աղվես, գայլ, շնագայլ
- Կատվազգիների ընտանիք՝ անտառային կատու
- Կզաքիսազգիներ՝ աքիս, կզաքիս, գորշուկ
3. Նապաստականմանների ընտանիք՝ շեկ նապաստակ
4. Կրծողների կարգ ՝ սկյուռ,

«Դիլիջան» ազգային պարկի կենդանական աշխարհի տեղաշարժի, ուսումնասիրություն և տվյալների վերլուծություն:

«Դիլիջան» ազգային պարկում կենդանական աշխարհի տեղաշարժի ուսումնասիրության իրականացման նպատակով հավաքագրվել են նախնական նյութեր, որոնք հետագա եռամսյակների ընթացքում ենթակա են վերլուծության և ճշգրտման, տեղում իրականացվելիք ուսումնասիրությունների միջոցով: 2025 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ԴԱՊ-ի տարածքում տեղադրվել են ֆոտոթակարդներ, որոնց հավաքագրված տվյալները գրանցվել են բազայում: Ինչպես նաև ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանվել է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական և ժամանակավոր (սեզոնային) դիտակետեր, երթուղիներ՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար:

Հունվարից մարտն ընկած ժամանակահատվածում գրանցվել են հիմնականում այծյամներ, անտառային կատու, գորշուկ, վայրենակերպ, կզաքիսներ: Արջերի թվաքանակը բավականին քիչ է պայմանավորված տեսակի ձմեռային քնի շրջանով: Ներկայացված տվյալները հետագայում ենթակա են փոփոխության, քանի որ փետրվար ամսին ԴԱՊ-ի և NABU հայաստանյան մասնաճյուղի համագործակցության շրջանակներում, ցանցային եղանակով տեղադրվել են ֆոտոթակարդներ, որոնց արդյունքները դեռևս վերծանված չեն:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություն

Հաշվի առնելով բույսերի աճի և զարգացման կենսաբանական փուլերը, այս ժամանակահատվածում տեղեկատվություն է հավաքագրվել ԴԱՊ-ի, ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տեսակային կազմի վերաբերյալ: Նյութեր են հավաքագրվել վերոնշյալ բուսատեսակների հնարավոր աճելավայրերի, տեսակային առանձնահատկությունների, վեգետացիոն շրջանների վերաբերյալ: Հաջորդ եռամսյակների ընթացքում, նախապես ընտրված տարածքում ուսումնասիրությունների իրականացման նպատակով կկազմակերպվեն շրջայցեր, դիտայցեր, կկատարվի բուսատեսակների վիզուալ զննում, լուսանկարում, կտեղադրվեն կետային փորձահրապարակներ /1x10 կամ 3x3/,տվյալների հավաքագրում: Յուրաքանչյուր բուսատեսակի աճի և զարգացման բնորոշ ժամանակահատվածում կիրականացվեն ուսումնասիրություններ և դիտարկումներ դրանց աճելավայրերի և պոպուլիացիաների ընդհանուր վիճակի վերաբերյալ: Ինչպես նաև բուսատեսակների ընդհանուր վիճակի գնահատումից հետո անհրաժեշտության դեպքում կիրականացվեն ինվազիվ բուսատեսակներից տարածքների մաքրման աշխատանքներ՝ կենսաբանական մեթոդներով: Հաջորդ եռամսյակների ընթացքում ուսումնասիրությունների ժամանակ, որպես թիրախային տեսակներ կընտրվեն մասնավորապես 3 տեսակ ինվազիվ բույսեր, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք նախկին տարիների ընթացքում ազգային պարկի տարածքում առավել հաճախ են գրանցվել և համարվում են ագրեսիվ տեսակներ: Դրանք են՝ Տատասկ ալեհեր (Cirsium incanum), Կոնիզա կանադական (Conyza canadensis և Ամբրոզիա օշինդրատերև (Ambrosia artemisiifolia.): Ինչպես նաև վերջին երկու տարիների ընթացքում, առավել հաճախ Պարզ և Գոշ լճերի հարակից տարածքում հանդիպող և ազգային պարկի տարածքի համար նոր տեսակ համարվող Circaea lutetiana – Կախարդախոտ փարիզյան տեսակը, որը նաև բնորոշ չէ Իջևանի ֆլորիստիկ շրջանին:

էկոկրթական, ճանաչողական, դասընթաց – սեմինարների իրականացում ուսումնական հաստատությունների սաների, էկոխմբակների համար

Թեղուտի միջնակարգ դպրոց */ մասնակիցների թիվը 33/*

Բնապահպանական կրթության, շրջակա միջավայրի մասին գիտելիքների ձեռքբերման, բնապահպանական գործունեության հմտությունների և ընդհանուր բնապահպանական մշակույթի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Թեղուտի միջնակարգ դպրոց: Դպրոցի 5-րդ դասարանի աշակերտների համար աշխատակիցներն աշակերտներին ներկայացրել են հետևյալ բնապահպանական թեմաներով դասընթաց-քննարկում.

- ✓ «Անտառների դերն ու կարևորությունը, Ծառահատումների հետևանքները»
- ✓ «Անտառները մարդկանց համար, թե՝ մարդիկ անտառների…»

Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց */ 30 մասնակից /*

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց: Այցելության շրջանակներում 8-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել և ներկայացրել են ինտերակտիվ, բնապահպանական, էկոկրթական դասընթաց սեմինարներ, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը,
- ✓ «Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն»
- ✓ ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:

Խաչարձանի միջնակարգ դպրոց */ մասնակիցների թիվը 20 /*

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցելել են Դիլիջան համայնքի Խաչարձանի միջնակարգ դպրոց: 8-9-րդ դասարանների աշակերտների համար իրականացվել է ինտերակտիվ էկոկրթական սեմինար հետևյալ թեմաներով՝

- ✓ Անտառ, ծառահատումներ և դրանց հետևանքները
- ✓ ՀՀ Կարմիր գիրք: Կարմիր գրքային տեսակները «Դիլիջան» ազգային պարկում
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, հետագա զարգացման ուղղությունները
- ✓ Հանդիպման ավարտին մասնակիցների հետ գիտելիքների ամրապնդման նպատակով իրականցվել է հիշողության և բնապահպանական խաղ, հարցեր:

Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց */ մասնակիցների թիվը 33 /*

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով.

- ✓ «Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է»
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը:
- ✓ «Մարդ – բնություն փոխհարաբերություն»

Դիլիջանի համար վեց հիմնական դպրոց */ մասնակիցների թիվը 25 /*

Բնության նկատմամբ բարեխնամ վերաբերմունքի ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցների կողմից, Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 5-7-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպվել է դասընթաց հետևյալ թեմաներով՝

- ✓ «Վայրի բնության պահպանության կարևորությունը»
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները և էկոտուրիստական գույքից օգտվելու կանոնները:

Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոց */ մասնակիցների թիվը 27 /*

Վաղ տարիքում շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքի զարգացման և էկոդաստիարակության ձևավորման նպատակով «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի աշակերտների համար անց են կացրել բաց դաս՝ «Դիլիջան» ազգային պարկի բուսական, կենդանական աշխարհի և առեղծվածային սնկերի բացահայտման նպատակով:

Դասընթաց-քննարկման շրջանակներում հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները սահապատկերների միջոցով ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, խոսվել է կարմիր գրքային տեսակների,բնության մեջ մարդու վարվելականոնների և բնության պահպանության կարևորության մասին:

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, ընդհանուր աշխարհագրության ամբիոն */ մասնակիցների թիվը 36/*

Մարտի 20-ին Անտառների միջազգային օրվան ընդառաջ, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնում հյուրընկալվել էին ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին կուրսի, Սերվիսի ամբիոնի 3-րդ կուրսի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողներ, այդ թվում Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտներ Վարդուհի Մարգարյանը, Կամո Ալեքսանյանը և

Արևմտյան Ուկրաինայի համալսարանի Երևանի կրթագիտական ինստիտուտի դոցենտ Արմեն Սեդրակյանը:

Ուսանողների հետ կենտրոն էին այցելել նաև արտերկրից (Ֆրանսիայից, Գերմանիայից, Ռուսաստանից) ժամանած գիտնականներ, ովքեր եկել էին մասնակցելու անտառագետի, ջրաբանի և օդերևութաբանի մասնագիտական օրվա առիթով ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում մարտի 21-22-ին կազմակերպվող «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդի հիմնախնդիրները փոփոխվող կլիմայի պայմաններում. հարմարվողականություն, կայունություն և արտադրական գործընթաց» խորագրով միջազգային գիտաժողովին:

Գիտության բաժնի աշխատակիցների կողմից մասնակիցների համար անց է կացվել գիտաճանաչողական սեմինար հետևյալ թեմաներով՝

- ✓ «Դիլիջան» ազգային պարկը, որպես բնության հատուկ պահպանվող տարածք
- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները,

Հանդիպման ընթացքում խմբի համար փորձնականում կիրառվել է ծառերի տարիքաչափը և ներկայացվել դրա օգտագործման ձևը: Հանդիպումն ամփոփվել է հյուրերի «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» այցելությամբ:

Դիլիջանի թիվ 4 դպրոց */ մասնակիցների թիվը 29 /*

Անտառների միջազգային օրվա տոնին նվիրված «Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցները Դիլիջանի թիվ 4 դպրոցի էկոխմբակի անդամների և 9-րդ

դասարանի աշակերտների համար կազմակերպել են «Անտառների պահպանությունը մեր ձեռքերում է և ես պատասխանատու եմ անգամ մեկ ծառի համար» թեմայով բնապահպանական դասընթաց-միջոցառում:

- ✓ Սահապատկերի միջոցով ներկայացվել է անտառների դերն ու պահպանությունը:
- ✓ Մասնակիցներից ձևավորվել են թիմեր և ներկայացվել է խմբային ձևաչափով ստեղծագործական աշխատանքի ներկայացման թեման:
- ✓ Աշակերտներից ձևավորված յուրաքանչյուր խումբ գործնական աշխատանքի միջոցով ներկայացրել է «Ես պատասխանատու եմ անտառի պահպանության համար, քանի որ...» թեմատիկ պաստառ:
- ✓ Թիմային աշխատանքի շրջանակներում աշակերտների հետ համատեղ պատրաստվել է բնապահպանական պաստառ նվիրված այսօրվա բնապահպանական տոնին և յուրաքանչյուր աշակերտ արտահայտել է իր առաջարկություններն ու մտահոգությունները:

Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան և Երասխի միջնակարգ դպրոցներ

/ մասնակիցների թիվը 36 /

Թռչունների միջազգային օրվան ընդառաջ «Դիլիջան» ազգային պարկի գիտական բաժնի աշխատակիցներն Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան և Երասխի միջնակարգ դպրոցների 5-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել և անց են կացրել բաց դաս – միջոցառում հետևյալ թեմաներով.

- ✓ «Անտառի բնակիչների պահպանությունն ու պաշտպանությունը մեր պարտականությունն է»

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի անտառներն ու նրա բնակիչները
- ✓ «Անտառներում մարդու վարվելականոնները»

Միջոցառման շրջանակներում աշակերտները ներկայացրել են իրենց կողմից հավաքագրված, անտառների և նրա բնակիչների մասին հետաքրքրաշարժ նյութեր և վարչական շենքի հարակից տարածքում, բնապահպանական դասընթացների համար նախատեսված տաղավարի հարակից տարածքում տեղադրել են իրենց ձեռքերով պատրաստված թռչնաբներ և կերեր:

Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոց */ մասնակիցների թիվը 28 /*

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գիտական բաժնի աշխատակիցները Լոռվա մարզի Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոցի 11-12-րդ դասարանների աշակերտների համար անց են կացրել ինտերակտիվ, բնապահպանական, էկոկրթական դասընթաց սեմինարներ, հագեցած գիտելիքների ստուգման խաղերով, որի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաներով սահապատկերներ.

- ✓ «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը,
- ✓ «Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն»
- ✓ ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները, ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:

«Դիլիջան» ԱՊ ՊՈԱԿ-ի, գիտական բաժնի, 2025 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված դասընթացներ				
	Ամսաթիվ	**Դասընթացի թեման**	**Կրթական հաստատություն**	**Մասնակիցների թիվ**
1	31.01.2025թ	«Անտառների դերն ու կարևորությունը, Ծառահատումների հետևանքները» «Անտառները մարդկանց համար, թե՝ մարդիկ անտառների...»	**Թեղուտի միջնակարգ դպրոց ի 5-րդ դասարանի աշակերտներ**	33
2	06.02.2025թ	1.«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, 2.«Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն» 3.ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները , ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:	**Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց: Այցելության շրջանակներում 8-9-րդ դասարանների աշակերտներ**	30
3	14.02.2025թ	Անտառ, ծառահատումներ և դրանց հետևանքները ՀՀ Կարմիր գիրք: Կարմիր գրքային տեսակները «Դիլիջան» ազգային պարկում «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, հետագա զարգացման ուղղությունները Հանդիպման ավարտին մասնակիցների հետ գիտելիքների ամրապնդման նպատակով իրականցվեց հիշողության և բնապահպանական խաղ, հարցեր, որոնց աշակերտները տվեցին սպառիչ պատասխաններ:	**Դիլիջան համայնքի Խաչարձանի միջնակարգ դպրոց: 8-9-րդ դասարանների աշակերտներ**	20
4	28.02.2025թ	«Վայրի բնության ապագան մեր ձեռքերում է» «Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները, դրանց պահպանության և պաշտպանության անհրաժեշտությունը: «Մարդ – բնություն փոխհարաբերություն»	**Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտներ**	33
5	05.03.2025թ	«Վայրի բնության պահպանության կարևորությունը» «Դիլիջան» ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները և էկոտուրիստական գույքից օգտվելու կանոնները	**Դիլիջանի համար վեց հիմնական դպրոցի 5-7-րդ դասարանների աշակերտներ**	25
6	18.03.2025թ	բաց դաս՝ «Դիլիջան» ազգային պարկի բուսական, կենդանական աշխարհի և առեղծվածային սնկերի բացահայտման նպատակով: Դասընթաց-քննարկման շրջանակներում հաշվի առնելով աշակերտների տարիքային	**Դիլիջանի Վ.Անանյանի անվան միջնակարգ դպրոցի 2-րդ դասարանի**	27

		առանձնահատկությունները սահապատկերների միջոցով ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը, խոսվել է կարմիր գրքային տեսակների,բնության մեջ մարդու վարվելականոնների և բնության պահպանության կարևորության մասին:	**աշակերտներ**	
7	20.03.2025թ	«Դիլիջան» ազգային պարկը, որպես բնության հատուկ պահպանվող տարածք 2.«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, կարմիր գրքային տեսակները,	**ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, Ընդհանուր աշխարհագրության ամբիոն**	36
8	21.03.2025թ	Սահապատկերի միջոցով ներկայացվել է անտառների դերն ու պահպանությունը: Մասնակիցներից ձևավորվել է թիմեր և ներկայացվել խմբային ձևաչափով ստեղծագործական աշխատանքի ներկայացման թեման: Աշակերտներից ձևավորված յուրաքանչյուր խումբ գործնական աշխատանքի միջոցով ներկայացրել է «Ես պատասխանատու եմ անտառի պահպանության համար, քանի որ...» թեմատիկ պաստառ: Թիմային աշխատանքի շրջանակներում աշակերտների հետ համատեղ պատրաստվել է բնապահպանական պաստառ նվիրված այսօրվա բնապահպանական տոնին և յուրաքանչյուր աշակերտ արտահայտեց իր առաջարկություններն ու մտահոգությունները:	**Դիլիջանի թիվ 4 դպրոցի էկոխմբակի անդամների և 9-րդ դասարանի աշակերտներ**	29
9	27.03.2025թ	«Անտառի բնակիչների 5պահպանությունն ու պ5աշտպանությունը մեր պարտականությունն է» «Դիլիջան» ազգային պարկի անտառներն ու նրա բնակիչները «Անտառներում մարդու վարվելականոնները» Միջոցառման շրջանակներում աշակերտները ներկայացրել են իրենց կողմից հավաքագրված, անտառների և նրա բնակիչների մասին հետաքրքրաշարժ նյութեր և վարչական շենքի հարակից տարածքում, բնապահպանական դասընթացների համար նախատեսված տաղավարի հարակից տարածքում տեղադրեցին իրենց ձեռքերով պատրաստված թռչնաբներ և կերեր:	**Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան և Երասխի միջնակարգ դպրոցների 5-9-րդ դասարանների աշակերտներ**	36
10	28.03.2025թ	«Դիլիջան» ազգային պարկի կենսաբազմազանությունը, «Կարմիր գրքային տեսակները մեր պաշտպանության կարիքն ունեն» ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունները, զարգացման ուղղությունները , ինչպես նաև աշակերտները ծանոթացել են վրանների և քնապարկերի օգտագործման կանոններին:	**Լոռվա մարզի Գուգարքի Հ. Շիրազի անվան ավագ դպրոցի 11-12-րդ դասարանների աշակերտներ**	28
	Մասնակիցների ընդհանուր թիվը			**297**
	Միջոցառումների թիվը			**10**

Զբոսաշրջային ծառայությունների մատուցում

2025 թվականի առաջին եռամսյակում այցելուների կենտրոն են այցելել 104 զբոսաշրջիկ: Այցելուները ստացել են տեղեկատվություն և խորհրդատվություն ԴԱՊ-ի էկոտուրիստական հնարավորությունների, ենթակառուցվածքների և էկոերթուղիների վերաբերյալ:

1 2	Հ/Հ	Օր/ամիս/տարի	Այցելուների թիվը	Այցելուների երկիրը	Այցելուների սեռը		Այցելուների տարիքը /մոտավոր/	Այցելության վայրը
					արական	իգական		
372	1	16.01.2025	3	Ռուսաստան	2	1	35-37 6	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
373	2	12.02.2025	2	Ռուսաստան	1	1	30, 22	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
374	3	17.02.2025	2	Ռուսաստան	1	1	28	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
375	4	17.02.2025	5	Վրաստան	2	3	30-40	Երկնքի հայելու արահետ
376	5	20.02.2025	2	Ռուսաստան	1	1	25-30	Միջնադարյան վանքերի արահետ
377	6	28.02.2025	2	Ռուսաստան	2		18-30	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
378	7	17.03.2025	25	Հնդկաստան	11	14	20-35	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
379	8	19.03.2025	16	Հայաստան	7	9	18-30	Ապակեքարի արահետ
380	9	20.03.2025	36	Ռուսաստան, Հայաստան			18-65	Պարզ լիճ, Բազմացման կենտրոն
381	10	25.03.2025	2	Գերմանիա		2	40-50	Թաքնված ջրվեժի արահետ
382	11	27.03.2025	3	Հայաստան	3		18-25	Թաքնված ջրվեժի արահետ
383	12	27.03.2025	4	Հայաստան	2	2	30-40, 12. 15	Միջնադարյան վանքերի արահետ
384	13	28.03.2025	2	Հոլանդիա	1	1	28-30	Կենու պուրակի արահետ

ԴԱՊ-ի առավել ակտիվ ռեկրեացիոն գոտիների և էկոերթուղիների առկա իրավիճակի գնահատում, մոնիթորինգ

2025 թվականի առաջին եռամսյակում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 25 էկոտուրիստական երթուղիներից 2-ում /Թաքնված ջրվեժ և Կենու պուրակ/ իրականացվել են շրջայցեր երթուղիների առկա և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով: Հաշվի առնելով եղանակային ոչ բարենպաստ պայմանները աշխատանքները կիրականացվեն հաջորդ եռամսյակների ընթացքում:

- «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» են այցելել 4200 և ավելի զբոսաշրջիկ:
- «Ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ից ստացվել է 2 196.3 հազ. դրամ եկամուտ:
- Թեյերի վաճառքից ստացվել է 12. 0 հազ. դրամ եկամուտ

Հուշագրեր ունեցող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ շարունակական համագործակցություն

Արահետներ փոփոխության համար ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում 2025 թվականի առաջին եռամսյակում իրականացվել են Հաղարծին վանական համալիրի շրջակայքով անցնող շրջանաձև արահետի ամբողջացմանն ուղղված սպասարկման և կահավորման աշխատանքներ՝ փայտե աստիճանների կառուցում, արահետի միջանցքի բացում:

ԴԱՊ-ի տարածքում նախկին տարածքների ընթացքում Հրդեհված տարածքների մոնիթորինգ

2025 թվականի առաջին եռամսյակում հրդեհված տարածքների ուսումնասիրության նպատակով շրջայցեր է իրականացվել ԴԱՊ-ի «Շամախյան» տեղամասի 2-րդ պահաբաժնում: Հավաքագրվել են նյութեր և տվյալներ «Շամախյան» տեղամասի 2-րդ պահաբաժնի 8-րդ / N40°46'33" E44°51'22"/, / N40°46'48" E44°51'21"/, և 9-րդ / N40°46'44,7" E44°51'28,8"/, քառակուսիներում: Նշված հատվածներում հրդեհի բռնկման պատճառը ուսումնական զորավարժանքներն են, քանի որ տարածքը գտնվում է հրաձգարանի մոտակայքում: Նշված տարածքում և ԴԱՊ-ի մյուս պահաբաժիններում ուսումնասիրման աշխատանքները կշարունակվեն հաջորդ եռամսյակներում:

Շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»ի հարակից տարածքում իրականացվել են մաքրման աշխատանքներ:



Ընթացիկ աշխատանքների իրականացում

Սահմանված ժամկետում կատարվել են նախարարության և տնօրինության կողմից ստացված հանձնարարականները և հրամանները, պատասխանվել են գրությունները: Բաժնի աշխատակիցների կողմից տեղամաս - մասնաճյուղերում պարբերաբար իրականացվել են շրջայցեր: Կատարվել է ԴԱՊ-ի պաշտոնական ֆեյսբուքյան էջի թարմացման, նորությունների, ճանաչողական, բնապահպանական, էկոկրթական նյութերի տեղադրման աշխատանքներ:

Գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության

բաժնի պետ	Դ. Առուստամյան
Գլխավոր անտառագետ	Ն. Հովհաննիսյան
Անտառագետ	Հ. Սաղրյան
Կենսաբան	Ա. Սաֆարյան
Զբոսաշրջության և մոնիթորինգի մասնագետ	Մ. Գուլինյան
Կադաստրի վարման մասնագետ	Հ. Քոչարյան